Արձանագրություն № 3
Երևանի քաղաքապետարանի կարիքների համար նստարանների և աղբամանների ձեռքբերման «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/328» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի
Протокол № 3
Заседание комиссии по процедуре закупки скамеек и урн для нужд Мэрии города Еревана с кодом «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/328»

Ք. Երևան
Г. Ереван
Նիստի անցկացման վայրը՝
Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 128 սենյակ
օրը՝ 10.09.2026թ.
ժամը՝ 10:00
Место проведения заседания.
Административное здание мэрии Еревана (г. Ереван ул. Аргишти 1), комната 128
день: 10.09.2026
время: 10:00
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Գրիգորյան
Հանձնաժողովի անդամներ՝	Լ. Միքայելյան, Ա. Խաչատուրյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լ. Աղաջանյան
Участвовали	
Председатель комиссии:	А. Григорян
Члены комиссии:	Л. Микаелян, А. Хачатрян
Секретарь комисии:	Л. Агаджанян

1. Գնման ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

1. О наличии документов, представленных участниками, занявшими первое место по результатам процедуры закупки, и их соответствии установленным требованиям

(Ա. Գրիգորյան, А. Григорян)

1.1 Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, արձանագրել է հետևյալը՝

«ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնահատման ընթացքում պարզվել է, որ ընկերությունը 29.08.2026թ. ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչի հետևանքով հնարավոր չի եղել պարզել, թե երբ է մասնակիցը հայտը ներբեռնել էլեկտրոնային աճուրդի համակարգ: Հարցում է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն և ստացված պատասխանի համաձայն՝ մասնակցության հայտը ներկայացվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու ամսաթվից առաջ՝ 24.08.2026թ.-ին: Այնուհետև գնահատող հանձնաժողովը արձանագրեց հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները:

«ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում

- բացակայում է հրավերով պահանջված հավելված 1.3-ը (իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը):

- դիմում-հայտարարությունը (Հավելված 1) հաստատված չի էլեկտրոնային թվային ստորագրությամբ,
- դիմում-հայտարարության (Հավելված 1) վավերապայմաններում նշված ընթացակարգի ծածկագիրը, մասնակցության չափաբաժնի և պատվիրատուի վերաբերյալ տեղեկատվությունը սխալ են ներկայացվել,
- 1-ին չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում տեխնիկական բնութագրի սյունակում լրացված է միայն «ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ» գրառումը:

1.1 Оценочная комиссия, изучив заявки, представленные участниками, занявшими первое место, зафиксировала следующее:

При рассмотрении заявки ООО «СМАЙЛ ГРУП» установлено, что компания 29.08.2026 г. была включена в список участников, не имеющих права участвовать в процессе закупок. Представленные участником документы не заверены электронной цифровой подписью, вследствие чего не представилось возможным установить, когда участник загрузил заявку в систему электронного аукциона. В Министерство финансов Республики Армения был направлен запрос, и согласно полученному ответу заявка на участие была подана до даты включения компании в Список участников, не имеющих права участвовать в процессе закупок — 24.08.2026 г. Затем оценочная комиссия зафиксировала следующие несоответствия требованиям приглашения.

В заявке ООО «СМАЙЛ ГРУП» отсутствует требуемое приглашением

- Приложение 1.3 (декларация о реальных бенефициарных владельцах).
- заявление-декларация (Приложение 1) не заверено электронной цифровой подписью;
- код процедуры, сведения о лоте участия и заказчике, указанные в реквизитах заявления-декларации (Приложение 1), представлены неверно;
- в колонке технической характеристики полного описания предлагаемого товара по лоту 1 указана только запись **«ООО «СМАЙЛ ГРУП»**.

1.2 Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետի պահանջները՝ որոշեց ծանուցել մասնակցին հրավերով սահմանված ժամկետում /ծանուցումը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում/ շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Անհամապատասխանությունները շտկելու դեպքում ներկայացված հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում կգնահատվի անբավարար և կմերժվի՝ համաձայն Կարգի 42-րդ կետի: Անհամապատասխանությունների չշտկումը կդիտվի մասնակիցների ստանձնած պարտավորությունների խախտում:

1.2 Исходя из вышеизложенного, оценочная комиссия, основываясь на требованиях пункта 41 Порядка, утвержденного постановлением Правительства РА № 526-n «об организации процесса закупок», решила уведомить участника в установленный приглашением срок /в течение одного рабочего дня с момента получения уведомления/ для устранения выявленных несоответствий. в случае устранения несоответствий редставленная заявка будет оценена как удовлетворительная, в противном случае она будут оценена как неудовлетворительная и отклонена в соответствии с пунктом 42 порядка. нарушение обязательств, взятых на себя участниками:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:

Принято решение: за – 3, против – 0.

2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

2. Об утверждении дня, времени и места следующего заседания комиссии

(Ա. Գրիգորյան, А. Григорян)

2.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել մասնակցի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 12:00-ին, ք. Երևան, Արգիշտի 1, 128 սենյակ հասցեում:

2.1 Оценочная комиссия решила созвать следующее заседание в следующий рабочий день после оценки исправленных документов, представленных участником, в 12:00 по местному времени по адресу: г. Ереван, ул. Аргишти, 1, кабинет 128.

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:
Принято решение: за – 3, против – 0.

Հանձնաժողովի նախագահ՝ Председатель комиссии:		Ա. Գրիգորյան А. Григорян
Հանձնաժողովի անդամներ՝ Члены комиссии:		Լ. Միքայելյան Л. Микаелян
		Ա. Խաչատուրյան А. Хачатрян
Քարտուղար՝ Секретарь комиссии:		Լ. Աղաջանյան Л. Агаджанян